ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 0306/1810 25.04.2018թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի ապրիլի 23-ին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Մասիսի ՁՊՎ և ձերբակալվածների հետ հանդիպելով արձանագրեց, որ նրանց տրամադրվել էր օգտագործման ոչ ենթակա, <<հնարավոր է, որ սրբիչները գտնվում էին լվացած վիճակում, բայց այնքան սև էին և կեղտոտ տեսք ունեին, որ դա երբեք տվյալ ձերբակալվածները չէին օգտագործի>>, սրբիչներ:

Դիտորդական խմբին մեկնաբանեցին, որ ՁՊՎ-ում պահված նախորդ անձինք կոշիկներն են սրբել և գնացել են, բայց իրենք փորձել են դա լվանալ, որը չի մաքրվել:

ՁՊՎ-ի վարչակազմը, կարծում ենք, որ տեղյակ չէ, որ համաձայն ՀՀ Կառավարության 5 հունիսի 2008 թվականի N 574-Ն որոշման 15-րդ գլխով սահմանված է ՁՊՎ-ում պահվող անձին նյութական պատասխանատվության ենթարկելու կարգին:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը առաջնային հանել օգտագործումից տվյալ սրբիչները և տալ մեկնաբանություն դրանց վերաբերյալ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՓԱՍՏԱԹՂԹԱՐԱՆ
ՄՏԻՑ թիվ 1033
«02» 05 2018թ.

ՀՀք.Գյումրի 3123,Կ.Սարգսյան 13
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 77) 86 99 66
E-mail: info@policemonitoring.org